ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑԻՆ ԵՒ ՆՐԱ «ՅԱՒԵՏԻՍ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ» ՃԱՌԸ

«Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ» (Ես. Է. 14): Ս. Մարիամ Աստվածածինը մարդկության փրկագործության համար իր ստանձնած առաքելությամբ բարձր է թե՛ սրբերից, թե՛ հրեշտակներից: Քրիստոնեական աստվածաբանության մեջ նա հայտնի է որպես Ամենասուրբ Կույս եւ որպես Մայր մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի: Անշուշտ, բարձր եւ մեծ առաքինություն է հրաժարվել աշխարհիկ կյանքից եւ սեփական անձը նվիրաբերել Աստծուն: Սուրբ Կույսն աննկարագրելի բարձրության եւ առաքելության հասցրեց Աստծուն ծառայելու այդ վեհ առաքինությունը, որով արժանացավ Աստծու մայրը լինելու, աշխարհի Արարչին ծնունդ տալու, ինչպես նաեւ մարդկային հոգեւոր կյանքի փրկության միջոց դառնալու կոչմանը: Հնազանդվելով Աստվածային պատգամին եւ ծնելով ամենի Արարչին ու ամենքի Փրկչին՝ նա վեր բարձրացրեց, ազատություն շնորհեց Եւային, որ մեղքի պատճառով գահավիժել էր կորստյան վիհի մեջ, եւ դարձավ Նոր Եւա: Ս. Կույսը Աստվածամայրության բարձր պատիվն ընդունելուց հետո մնաց հավերժ Կույս՝ անաղարտ եւ սուրբ, որովհետեւ օծվել էր աստվածության սուրբ յուղով, քանի որ Աստծու անունը «իւղ հեղեալ է» (Երգ. Ա. 2):

Հայ եկեղեցական թե՛ թարգմանական, թե՛ ինքնուրույն մատենագրության մեջ բազում են Աստվածածնին նվիրված ճառերը, քարոզները, գանձերն ու տաղերը: Հունաբան դպրոցի ուշ շրջանի թարգմանությունների շարքում աչքի է ընկնում Դ. դարի նշանավոր աստվածաբան ու փիլիսոփա Ս. Գրիգոր Նյուսացու «Յաւետիս Աստուածածնին» ճառը[1]:

Սկզբից եւեթ պարզ է դառնում, որ այս ճառը Ս. Գրիգորը խոսել է Աստվածածնի Ավետման տոնին: Նյուսացին, հիմնվելով Սուրբ Գրքի վրա, ստիպողաբար մեկնում է Ղուկասի Ավետարանում տեղ գտած Աստվածածնի Ավետման դրվագը: Այս ամենի մասին վկայում է սուրբգրային տեղիների առատությունը ճառում: Ճառի միջոցով բացահայտվում են Ս. Գրիգոր Նյուսացու աստվածաբանական եւ փիլիսոփայական հայացքները, նյութին խորապես տիրապետելու, նյութի մեջ խորանալու եւ այն պարզաբանելու հմտությունը: Ճառն աչքի է ընկնում նաեւ իր գեղարվեստական արժանիքներով՝ լեզուն ավելի ճոխ է եւ հյութեղ: Ճառի մեջ, բովանդակային իմաստով, կարելի է տարբերակել բարոյական եւ աստվածաբանական մի քանի առանձնահատկություններ:

Ինչո՞ւ բարոյական, որովհետեւ մարդկային պատմության մեջ չկա այնպիսի մի կատարելատիպ, ինչպիսին Ս. Աստվածածինն է: Նախ եւ առաջ շատ կարեւոր է ընտրյալ լինելու գաղափարը: Արշակ Տեր-Միքելյանը գրում է. «Ընտրյալ ազգից ընտրվում է Մարիամ Ս. Կույսը, վասնզի Աստուծո փրկությունը ընդունելու համար ընտրվեց այն ազգն

1 Ս. Գրիգոր Նյուսացու եւ նրա մատենագրական վաստակի մասին տե՛ս Կ. Մուրադեան, Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Երեւան, 1993:

եւ նախապատրաստվեց, այնպես որ նրա նախապատրաստության կատարումն եղավ Մարիամ Ս. Կույսը»[2]: ԺԹ. դարի այս հեղինակի խոսքը մեկնաբանված տարբերակով հանդիպում ենք Տիրամորը նվիրված շարականներում, ճառերում, քարոզներում, այդ թվում՝ Ս. Գրիգոր Նյուսացու ճառում: Այստեղ Նյուսացին շեշտում է Ս. Մարիամի ընտրյալ լինելու գաղափարը՝ ասելով, բոլոր ազգերի միջից նրան ընտրեց, որովհետեւ տեսավ Ս. Կույսին առաքինի եւ գեղեցկագույն, իմաստուն եւ ողջախոհ, սուրբ հոգով եւ մարմնով. «Քանզի եւ հանդիպիւր իսկ ըստ ամենայնի իմաստուն եւ ողջախոհին. վասն զի հանգոյն նման նմա ոչ եղեւ յամենայն ազգս: ...Քանզի յամենա՛յն ազգաց նա միայն սուրբ հոգով եւ մարմնով եղեւ: Զի նա միայն կրեաց զայն որ կրէ զամենայն բանիւ զաւրութեա՛մբ իւրով: Եւ ո՛չ միայն սքանչանալ զոյր ընդ Կուսին գեղեցկութիւնն. այլեւ ընդ առաքինի բարս հոգոյն»[3]:

Հաջորդ կարեւոր ասպվածաբանական կետերից է Ս. Կույսի ազգաբանությունը եւ կապը Դավթի թագավորական ընտանիքի հետ: Դավիթ արքան սերում էր Հեսսեից: Այս մասին խոսում է Եսայի մարգարեն. «Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (Ես. ԺԱ. 1): Ս. Գրիգոր Նյուսացին գրում է. «Ղուկաս պատմէ յաւետարանումն, զի նոյն Դաւթի զհարազատութիւնն: Ե՛լ ասէ եւ Յովսէփի ի Գալիլէէ ի քաղաք Հրէասպանի որ կոչի Բեթղեհէմ. գրիլ հանդերձ Մարեմաւ խաւսեցելով նմա որ էր յղի՛: Վասն լինելոյ նորա ի տանէ եւ ի հայրութենէ Դաւթի»[4]: Դավթի արմատից էր սերում Ս. Աստվածածինը. նա ներկայանում է որպես թագավորական պսակ, որից եւ ծնվում է մարդկանց հոգիների անմահ Թագավորը:

Շատ կարեւոր է Տիրամոր եւ նախամոր միջեւ եղած ջրբաժանը: Խոսելով արարչագործության, չարի գոյության եւ մեղսագործության մասին՝ ինքնըստինքյան մոտենում ենք մեր նախածնողներին: Ազատության չարաշահումը հանգեցրեց մեղքի: Եւ ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Եւ Ադամ ոչ պատրեցաւ՝ այլ կին պատրեցաւ եւ յանցեաւ» (Ա. Տիմ. Բ. 14): Մեր նախամայր Եւան, որ նախահոր՝ Ադամի կողմից կոչվեց Կյանք (Ծնող. Գ. 20), դարձավ «կնիք դատապարտութեան եւ մեղուցեալ մայր գլորեալ»[5]: Չարով կերպարանավորված օձը նախամոր համար դարձավ ցանկության եւ մեղսագործության պատճառ: Այս մասին խոսում է Նյուսացին. «Ո՞չ որպէս առաջին կոյսն եւ Աստուծոյ միայն պարտելով ի դրախտին, թո՛յլ խորհրդովք, եւ անքննաբար զառ ի սկզբնաչար ուձին ընկալաւ զբանն ապականեաց զստորին խորհուրդս. յորոյ ձեռն հեղեալ նենգաւորին զթոյնսն խառնեաց, զմա՛հ ածելով յամենայն աշխարհս»[6]: Այնուհետեւ շարունակում՝ գրելով, որ նախամոր հանցանքը Ս. Կույսը ուղղեց. «Յաղագս որոյ ամենայն աշխատութիւնք եհա՛ս սրբոցն. որոյ յանցանքն այսուիկ միայն սրբոյ

2 **Արշակ Տեր-Միքելյան,** Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, ծնթ. Հ. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 185:

3 ՄՄ՝ 1524, թ. 64բ, 66ա:

4 Անդ, թ. 66բ:

5 «Զայնքաղ Շարական», Ս. Էջմիածին, 1999, էջ 164:

6 ՄՄ՝ 1524, թ. 65ա:

կուսիս ուղղեա՛լ լինի: Եւ ո՛չ եթէ նախ զպարգեւն հանդուրժեաց ընդունել Սրբուհին յառաջ քան զտեղեկանալն»[7]:

Աստվածաբանական հաջորդ կողմը կապված է Տիրամոր կուսության հետ: Ըստ եկեղեցական ավանդության՝ Աստվածածնի «Հաւերժ Կոյս» կամ «Մշտակոյս» (Αειπαρθενος) տիտղոսը առաջին անգամ կիրառել է Թովմաս առաքյալը[8]: Այս որակումը պետք է իր կայուն տեղն գրաղեցներ հայրախոսական ավանդության մեջ: Սրա վառ վկայությունը գտնում ենք Ս. Աթանաս Ալեքսանդրացու մոտ. «Անհոսանուտ մարմնաւորութիւն Էմմանուէլի որ ի Մարիամայ Աստուածածնէ՝ անմեղանչական է: Վասն զի եւ յամուսնական որովայնէ մշտակուսէն. վասն այսորիկ եւ անապական խոստովանելի է. զի ամենայն ապականութեանց եւ մեղաց բաց բարձիչ է»[9]: Տիրամոր կուսության մասին Նյուսացին իր ճառում տալիս է հետեւյալ մեկնաբանությունը. երբ հրեշտակապետը հայտնվում է Ս. Մարիամին եւ ավետում Միածնի ծնունդը, նա խորհում է, թե ինչպե՞ս կարող է հղիանալ, որովհետեւ կույս է, եւ որդուն ծնելուց հետո արդյո՞ք կույս կմնա. «Արդեաւք տակաւին կոյս մնայցեմ կամ մատնեսցի արդեաւք կուսութիւն իմ անարժանութեան»: Նյուսացին շարունակում է՝ գրելով, որ, Սուրբ Հոգով է անհնարը հնարավոր դառնում. «Զի ուր Հոգին Սուրբ է, ամեն ինչ պատրաստագոյն յաւրինեա՛լ գոյ: Զի ուր ապուաածային շնորհն է, ամենայն ինչ կարելի է» [10]:

Տիրամոր կուսության վարդապետության հետ անխզելիորեն կապված է նաեւ նրա սրբության եւ Սուրբ Հոգով մաքրագործված լինելու գաղափարը: Աստվածաբանական գրականության մեջ Տիրամոր սրբության վերաբերյալ վարդապետությունը հայտնի է «կատարսիսի տեսություն» անվամբ: Այս տեսությունը զարգացրել է Ս. Գրիգոր Աստվածաբանը՝ ասելով, որ Քրիստոս ծնվել է «Սուրբ Հոգիին կողմէ նախամաքրուած Կոյսէն, մարմնով եւ Հոգիով»[11]: Տիրամոր սրբության մասին Նյուսացին գրում է՝ հիմնվելով Սաղմոսի (ՃԼԱ. 8) վրա. «Քանզի տապանակ ճշմարտութեան Սուրբ Կո՛յսն է: Ներքոյ եւ արտաքոյ ոսկիացեալ, եւ զբոլոր զանձն սրբութեան ընկալեալ»[12]:

Նշենք նաեւ, որ Հայ Եկեղեցին, ցուցաբերելով պատշաճ զգուշավորություն՝ «նախամաքրուած» (προκαθαρσιτης) եզրը բացառապես կապել է Ս. Հոգու ներգործելուց եւ Աստվածածնին սկզբնական մեղքից մաքրագործելուց հետո Բանի անապական մարմնացումը նախապատրաստելու իրողության հետ: Այս իմաստով է այն օգտագործված Հայ Եկեղեցու սրբազան ավանդության, նաեւ՝ մեծացուսցեների մեջ: Ս. Գրիգոր Նարեկացին գրում է. «Ի բարձրեալն Հաւրէ զաւրացեալ եւ հովանացեալ, հանգստեամբ Հոգւոյն հանդերձեալ եւ մաքրագործեալ, բնակութեամբ Որդւոյն

7 Անդ:

8 Տե՛ս «Ժամագիրք Ատենի», Ս. Էջմիածին, 1999, էջ 117:

9 «Գիրք Պարապմանց Սրբոյն Գիւրղի Եպիսկոպոսի Աղէքսանդրու Հայրապետի», Կ. Պոլիս, 1817, էջ 459:

10 ՄՄ 1524, թ. 64բ:

11 Տե՛ս **Թամար Տասնապետեան,** Գրիգոր Նարեկացիի «Ներբող Աստուածածնին». «Հանդէս ամսօրեայ», 1989, էջ 132:

12 ՄՄ 1524, թ. 66բ:

յարդարեալ եւ փաղավարեալ»[13]: «ԲԿ. Որ ողորմեցար ի մեղս» մեծացուսցեի երրորդ տան մեջ կարդում ենք. «Որ մաքրեցեր Հոգիդ Սուրբ՝ զսիրտ եւ զարգանդ Մօր քո փառակցին»[14]:

***

Բնագրի պատրաստության ժամանակ պահպանել ենք առանց ւ-ով սեռական տրականի ձեւերը (Հոգոյն): «Օ» ձայնավորն ամենուրեք արտահայտված է «աւ»-ով: Բացել ենք սուրբգրային տեղիները: Տերունական անունները եւ նրանց փոխարինող դերանունները եւ բառերը ներկայացրել ենք մեծատառով (ադամ-Ադամ, հոգոյն սրբոյ-Հոգոյն Սրբոյ):

Օգտագործել ենք հետեւյալ նշանները՝] (փոխ.), > (=չիք), ~ (=շրջ.), + (=ավելացված է): Ստորեւ տալիս ենք ձեռագրերի նկարագրությունները:

ա. Հմր 1524 (Ա, հիմք-ձեռագիր) - Ճառընտիրը գրվել է 1401 թ. Վարագավանքում, գրիչներն են՝ Հովհաննես քահանան, Ավետիս սարկավագը, Հովհաննես կրոնավորը, իսկ պատվիրատուները՝ Հայրապետ եւ Հովհաննես կրոնավորները: Ձեռագրի նյութը թուղթ է, թերթաքանակը՝ 931, մեծությունը՝ 48x32.5, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Բնագիրը զբաղեցնում է 63բ-66բ էջերը (գրիչը՝ Հովհաննես քահանա):

բ. Հմր 4802 (Ա) - Մեծադիր Ճառընտիր-Տոնականն ընդօրինակվել է ԺԵ. դարում, Ռշտունիքի Տշող գյուղում: Գրիչ՝ Ստեփաննոս սարկավագ, սպացողները՝ Ղազար քահանան եւ Ստեփաննոս կրոնաւորը: Ձեռագրի նյութը թուղթն է, թերթաքանակը՝ 810, մեծությունը՝ 51.5x33, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Բնագիրը զբաղեցնում է 44բ-47բ էջերը:

գ. Հմր 4869 (Բ) - Ճառընտիր-Տոնականն ընդօրինակվել է 1482 թ. Կտուց մենաստանում, Հովհաննես գրչի ձեռքով: Ձեռագրի նյութը թուղթ է, թերթաքանակը՝ 669, մեծությունը՝ 32x21.5, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Բնագիրը զբաղեցնում է 202բ-205բ էջերը:

դ. Հմր 4709 (Գ) - Ճառընտիրը գրվել է ԺԴ. դարում: Գրիչը՝ Հովհաննես, սպացողը՝ Էլմելեք: Ձեռագրի նյութը թուղթ է, թերթաքանակը՝ 636, մեծությունը՝ 47.5x31, գրությունը՝ երկսյուն, գիրը՝ բոլորգիր: Բնագիրը զբաղեցնում է 32բ, 36բա-35բա էջերը: Չենք կարող նաեւ չանդրադառնալ այն փաստին, որ Հմր 4709 ձեռագիրը ժամանակին ենթարկվել է նորոգության, որի արդյունքում տուժել է բնագիրը: Իրար են միախառնվել երկու ճառեր: Էջերի հերթականությունը խառնվել է: Համեմատելով մյուս երեք բնագրերի հետ՝ վերականգնել ենք ճառի էջային համակարգը: Սակայն, ցավ ի սիրտ, պետք է ասենք, որ վերականգնված տարբերակում ճառի սկզբից եւ վերջից բացակայում են մեկական էջեր:

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳԱՎԱԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

13 **Գրիգոր Նարեկացի,** Մատեան ողբերգութեան, Բան Զ., Երեւան, 1985, էջ 571:
14 «Ձայնքաղ Շարական», էջ 124:

ԵՐԱՆԵԼՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՒԵՏԻՍ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ*

(63բ)[1] Այսա՛ւր հրեշտակական դասիւքն[2] աւրհներ գութիւնքն[3] պայծառանան, եւ փայլումն գալստեանն Քրիստոսի զհաւ(64ա)ատացելո՛վք[4] հրճուին[5]: Այսա՛ւր պայծառ գարունն մեր, արդարութեան արեգակն պայծա՛ռ լուսով շո՛ւրջ փայլեաց զմեաւք[6] եւ լուսաւորեաց զխորհուրդս զի ի նայ[7] հաւատացելոցս[8]: Այսա՛ւր Ադամ նորոգեալ լինի, եւ պարէ՛ ընդ հրեշտակս յերկինս վերաթեւելով, վասն զի[9] վերագայո՛ւմն[10] եղեւ Հոգոյն Սրբոյ:

Այսա՛ւր աստուածային շնորհքն[11] իմանալեաց[12] լոյսն բացափայլէ, զի վե՛ր քան զմիտս[13] սքանչելիսն[14], զի յաւիտենից ծածկեալ խորհուրդն երեւելապէս մե՛զ երեւեցուցանելով[15]: Այսա՛ւր մշտնջենահոս[16] առաքինութեան[17] պսակ ընդելուզանի ի հրաշս[18] լսողաց. եւ տաւնասիրաց[19], գլուխ կամելով Աստուծոյ պսակել զտարփողս անթիւրելի հաւատոյս զհրաւիրեալսն ի ժառանգութիւն կոչելով. եւ զվերին արքայութիւնն փութացուցին[20] ընդունել զերկնային խորանսն, առ ի հպեցուցանել[21] յերկնային պաշտաւն անմարմնոցն[22] պարաց[23]: Այսաւր լցեալ լինի դաւթեան նուագն որ ասէ, «ուրախ լերուք երկինք եւ ցնծասցէ երկիր. լերինք ցնծասցեն յերեսաց Տեառն զի գայ[24]. եւ ցնծասցէ ամենայն փայտ[25] անտառի» (Հմմտ. Սաղմ. ՂԵ/ՂԶ. 11-13): Եւ արդ Դաւիթ փայտս եւ Տեառն ընդ յառաջ[26] ծառս կոչեաց արարողս պտուղ արժանիս գալստեան Տեառն:

Իսկ Տէրն մեր Յիսուս Քրիստոս զմշտնջենահոս շնորհսն[27] խոստացաւ ամենեցուն ի նա հաւատացելոցս. քանզի տեսից ասէ զձեզ «եւ ուրախ լինիջիք[28] եւ զուրախութիւնն[29] ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ» (Հմմտ. Յովհ. ԺԶ. 22): Այսաւր հուչակաւոր եւ անճառելի խորհուրդն ի Քրիստոս ունողացն յոյս. եւ

---

* Ա Երանելոյն Գրիգորի Նիւսացոյ Ասացեալ Յաւերիս Աստուածածնին] Երանելոյն Գրիգորի Նիւսացոյ Կեսարու Եպիսկոպոսի Յաւերիս Աստուածածնին եւ Կուսի Մարիամու: Բ .....Յաւերիս Սուրբ Աստուածածնին եւ Կուսին Մարիամու:

2 ԲԳ դասիւքն] դասիւք:

3 ԱԲ ուրհներգութիւնքն] ուրհներգութիւնք:

4 Բ զհաւապացելովք] զհաւապացելովքն:

5 ԱԲ հրճուին] հրճուի:

6 Գ զմեաւք] զմեաք:

7 ԱԳ նայ] նա:

8 Գ հաւապացելոցս] հաւապացելոց:

9 ԱԲ վասն զի] զի:

10 ԱԲ վերագայումն] վայրագ այս իմն:

11 ԱԲ շնորհքն] շնորհն, Գ] շնորհք:

12 ԱԲ իմանալեաց] անիմանալեաց:

13 ԱԲ զմիտս] զմիտսն:

14 ԱԲ սքանչելիսն] զսքանչելիսն:

15 ԱԲ երեւեցուցանելով] ցուցանելով:

16 Բ մշտնջենահոս] մշնջահոս:

17 ԱԲ առաքինութեան] առաքինութեանն:

18 ԱԲ ի հրաշս] ի հրաշալի:

19 ԱԲ տաւնասիրաց] ի տաւնասիրաց:

20 Ա փութացուցին] փութացին: Բ] փութասցին:

21 ԱԲ զերկնային...հպեցուցանել] զերկնախորհսն հպեցուցանել:

22 ԱԲ անմարմնոցն] անմարդոյցն:

23 Բ պարաց] պարուց:

24 Ա գայ] գա:

25 Բ փայտ] ծառք:

26 Բ յառաջ] առաջ:

27 ԱԲ շնորհսն] շնորհն:

28 ԱԲ լինիջիք] լինիցիք:

29 ԱԲ զուրախութիւնն] զուրախութիւն:

սրբապէս վերակնքելոց[30] քրիստոնէից[31] յայտնապէս մեզ պատմի:

Այսաւր Գաբրիէլ ընթերակացն Աստուծոյ[32] առ անծանակ[33] կոյսն գայ. «զուրախ լեր բերկրեալն» (Ղուկ. Ա. 28) աւետարանելով[34], «որոյ խորհեալ թէ որպիսի՞ ինչ է[35] ողջոյնս. եւ[36] խոկոյն զնովիմբ ածեալ հրեշտակն ասելով, Տէր ընդ քեզ: Մի՛ երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ, վասն որոյ յղասջիր եւ ծնցես[37] որդի եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս, նայ[38] եղիցի մեծ եւ Որդի Բարձրելոյն[39] կոչեսցի. եւ տացէ նմայ[40] Տէր Աստուած զաթոռն Դաւթի հաւր նորա[41]. եւ թագաւորեսցի[42] վերայ[43] տանն Յակոբայ[44] ի յաւիտե(64բ)ան[45]. եւ թագաւորութեան նորայ[46] վախճան մի լիցի: Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. զիա՞րդ լինիցի ինձ այդ զի զայր ոչ գիտեմ» (Հմմտ. Ղուկ. Ա. 30-34). արդեաւք տակաւին Կոյս մնայցեմ կամ մատնեսցի արդեաւք կուսութիւնս իմ[47] անարժանութեան:

Յայսոսիկ տարակուսեալ Սրբոյ Կուսին. վաղվաղակի մատուցանէր նմա[48] հրեշտակն զգլուխ բանին եւ ասէ. «Հոգին[49] Սուրբ եկեսցէ ի քեզ եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանասցի ի վերա քո, վասն որոյ ծնիցեալն ի քէն Սուրբ է եւ Որդի Աստուծոյ կոչեսցի» (Ղուկ. Ա. 35): Զի որ ինչ է նովի՛մբ յորջորջեսցի[50] ամենայն իրաւք: Ապա ուրեմն վայելչաբար[51] զՍուրբն Մարիամ յամենայն ազգաց զնա[52] միայն ընտրեաց շնորհն: Քանզի եւ հանդիպիւր իսկ ըստ ամենայնի իմաստուն եւ ողջախոհին[53]. վասն զի հանգոյն նման[54] նմա ո՛չ եղեւ յամենայն ազգս: Ոչ որպես առաջին կոյսն Եւայ. միայն պարտելով[55] ի դրախտին, թո՛յլ խորհրդովք, եւ անքննաբար[56] զառ ի[57] սկզբնաչար աւձին ընկալաւ զբանն[58] ապականեաց[59] զստորին խորհուրդս[60]. յորոյ ձեռն հեղեալ նենգաւորին զթոյն[61] խառնեաց[62], զմա՛հ ածելով յամենայն աշխարհս:

Յաղագս որոյ ամենայն աշխատութիւնք եհա՛ս սրբոցն. որոյ յանցանքն այսուիկ միայն Սրբոյ Կուսիւս[63] ուղղեա՛լ լինի: Եւ ո՛չ եթէ նախ զպարգեւն[64] հանդուրժեաց ընդունել Սրբուհին յա-

30 ԱԲ վերակնքելոց] վերակնքելոյ:
31 ԱԲ քրիստոնէից] քրիստովնէից:
32 ԱԲ ~ ընթերակացն Աստուծոյ Գաբրիէլ:
33 Բ անծանակ] անծանեակ:
34 Բ + աւետարանելով նմա:
35 ԱԲ է] իցէ:
36 ԱԲ > եւ:
37 ԱԲ ծնցես] ծնցիս:
38 ԱԲ նայ] նա:
39 ԱԲ բարձրելոյն] բարձրելոյ:
40 ԱԲ նմայ] նմա:
41 Ա նորա] նորայ:
42 ԱԲ թագաւորեսցի] թագաւորեսցէ:
43 Ա վերայ] ի վերա:
44 ԱԲ Յակոբայ] Յակոբա:
45 ԱԲ ի յաւիտեան] յաւիտեան:
46 ԱԲ նորայ] նորա:
47 ԱԲ > իմ:
48 ԱԲ > նմա:
49 ԱԲ Հոգին] Հոգի:
50 ԱԲ յորջորջեսցի] եւ յորջորջեսցի:
51 ԱԲ վայեչաբար] վաելչաբար:
52 ԱԲ > զնա:
53 ԱԲ ողջախոհին] ողջախոհ:
54 ԱԲ > նման:
55 ԱԲ պարտելով] պապրելովն, Գ] պապրելով:
56 ԱԲ խորհրդովք եւ անքննաբար] խորհրդովն անքնեաբար:
57 ԱԲ > ի:
58 ԱԲ զբանն] զբան:
59 ԱԲ ապականեաց] եւ ապականեաց:
60 Ա խորհուրդս] խորհուդն, Բ] խորհուրդն:
61 ԲԳ զթոյսն] զթոյնսն:
62 ԱԲ խառնեաց] խառնեալ:
63 Գ կուսիս] կուսկուսիս:
64 ԱԲ զպարգեան] զպարգեաս:

ռաջ քան զտեղեկանալն: Ո՞վ ոք իցէ որ յղեացն ասելով առ հրեշտակն[65], թէ ուստի՞ մեզ այսպիսի բարեբանութիւն: Յորո՞ց գանձուց արդեաւք[66] պարգեւատրութիւնս այս[67]: Ստորադրութիւն ստացեալ[68] ունիս[69] յերկնուստ յերկի՛ր եկեալ: Զմարդոյ կերպակցութի՛ւնս[70] ունիս[71] եւ ջահ լուսո՛յ փայլատակես[72]: Զայս յինքեան[73] խորհէր Սրբուհին:

Բայց ապա հրեշտակապետն այսպիսի բանիւք զքննութիւնն ելոյծ ասելով: «Հոգին[74] Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն ի վերա[75] քո հովանասցի, վասն որոյ ծնիցեալն ի քէն Սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի» (Հմմտ. Ղուկ. Ա. 35): Մի՛ երկնչիր Մարիամ. զի ո՛չ եկի երկիւղիւ պակուցանել զքեզ, այլ հալածել զստորադասութիւն երկիւղի[76]: «Մի՛ երկնչիր Մարիամ, զի գտե՛ր շնորհս[77] յԱստուծոյ» (Ղուկ. Ա. 30): Զշնորհն ըստ բնութեանն[78] մի՛ քններ, զի ո՛չ առ(65ա)նու յանձն շնորհքն[79] ընդ աւրինաւք քննութեան անկեալ[80]: Ծանեա՞ր Մարիամ որ ինչ ի հայրապետացն եւ ի մարգարէիցն մոռան իւր: Ուսա՞ր զայն[81] ինչ որ յայնժամ ի նոցանէ[82] իսկ յառաքելոցն գոյր ծածկեալ:

Լուա՞ր զոր պարք աստուածազգեստիցն[83] ո՛չ արժանաւորեցան լսել: Մովսէ՛ս, Դաւի՛թ, Եսայի՛[84], եւ ամենայն մարգարէքն յառաջագոյն վասն նորա քարոզեցին, այլ զզիարդն ո՛չ գիտացին:

Բայց դու միայն ո՛վ Սուրբ Կոյս: Զառ ի յամենեցուն[85] զանգիտացեալն առեալ ընգալար[86]: Զի[87] ուր Հոգին Սուրբ է, ամեն[88] ինչ պատրաստագոյն յաւրինեա՛լ գոյ: Զի[89] ուր աստուածային շնորհն է, ամենայն ինչ կարելի՛ է: «Հոգին[90] Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւրութիւն Բարձրելոյն հովանասցի ի վերա[91] քո: Վասն որոյ եւ ծնիցեալն ի քէն Սո՛ւրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի» (Հմմտ. Ղուկ. Ա. 35): Եթէ Որդի Աստուծոյ, ապա[92] եւ Աստուա՛ծ[93]: Կերպարանակից Հաւր եւ մշտնջենաւորակից: Յորում զամենայն ստացեա՛լ ունի յայտնութիւնս: Կերպարան Աստուծոյ եւ ծագումն փառաց փայլեալ: Որ ի Մշտնջենահո՛ս[94] եւ ի միշտ Կենդանի Աղբիւրէն[95] յառա՛ջ գայ, Լո՛յս Ճշմարիտ եւ Մշտնջե-

65 ԱԲ առ հրեշտակն] ցիրեշտակն:
66 Գ արդեաւք] արդեւք, Բ + մեզ մարգարիտ Բանդ առաքեցաւ ուստի արդեաւք:
67 ԱԲ + սպորադրութիւնս այս:
68 ԱԲ սրացեալ] երկիւղի սրացեալ:
69 Ա ունիս] ունիք, Բ] ունիմք:
70 ԱԲ կերպակցութիւնս] զկերպակցութիւնս:
71 Բ ունիս] ունի:
72 Բ փայլատակէս] փայլատակէ:
73 Ա Զայս յինքեան + Զայս եւ զսոյնպիսի յինքեան, Բ + Զայս եւ զսոյնպիսիս յինքեան:
74 ԱԲ Հոգին] Հոգի:
75 Գ ի վերա] ի վերայ:
76 Բ > Մի՛ երկնչիր.....երկիւղի:
77 Ա զշնորհս] շնորհս:
78 ԱԲ բնութեանն] բնութեան:
79 ԱԲ շնորհքն] շնորհն:
80 ԱԲ անկեալ] անկանել:
81 Բ զայն] զայս:
82 ԱԲ ի նոցանէ] եւ ի նոցունց:
83 ԱԲ աստուածազգեստիցն] աստուածազգեցիցն:
84 ԱԲ Դաւիթ, Եսայի] եւ Դաւիթ, եւ Եսայիաս: ԱԲ Եսայիաս] Եսայիաս:
85 Ա յամենեցուն] յամենեցունց, Բ] յամենեցունցն:
86 ԲԳ ընգալար] ընկալար:
87 Բ > Զի:
88 ԱԲԳ ամեն] ամենայն:
89 ԱԲԳ > Զի:
90 ԱԲ Հոգին] Հոգի:
91 Գ ի վերա] ի վերայ:
92 Ա ապա] ապայ:
93 Բ Աստուած] Աստուած է:
94 Ա մշտնջենահոս] մշտնջահոմ, Բ] մշտահոս:
95 Ա աղբիւրէն] աղբերէն, Բ] աղբերէ:

նաւոր: Քանզի մարգարէն վասն նորա գոչէ՛ր եւ ասէր[96]: «Գետոց յարձակմունս, ուրախացուցանեն[97] զքաղաքս Աստուծոյ» (Հմմտ. Սղմ. ԽԵ 5): Բայց ո՛չ զմի քաղաք, այլ զընթանո՛ւր[98], որպէս զմի՛ քաղաք ուրախացուցանեն զտիեզերս ամենայն: Ա՛րդ, վայելչաբար[99] հրեշտակն Սրբոյն Մարիամու[100] յառաջ քան զամենայն զուրախ լեր բերկրեալն նշանակեաց: Քանզի յամենա՛յն ազգաց նա միայն[101] Սուրբ Հոգով եւ մարմնով եղեւ[102]: Զի նա միայն կրեաց զայն որ կրէ զամենայն բանիւ զաւրութեա՛մբ իւրով[103]: Եւ ո՛չ միայն ոքանչանալ գոյր ընդ Կուսին գեղեցկութիւնն. այլեւ ընդ առաքինի բարս Հոգոյն, վասն որոյ եւ «զուրախ լեր բերկրեալն» յառաջագո՛յն նախաձայնեաց նմա հրեշտակն: Ո՞չ եթէ երկրաւոր փեսայ[104], այլ նոյն ինքն Սրբութեանց[105] Տէրն: Անծանակութեա՛ն Հայր[106]: Անապականութեան Հաստոյ[107] եւ ազատութեա՛ն Տուող[108]: Փրկութեա՛ն Հոգաբարձու[109], եւ ճշմարիտ խաղաղութեան Պարգեւատու[110], եւ բարեաց Կարգաւորիչ[111]: Որ ի կո՛յս երկրէ ստեղծ զԱդամ[112], եւ ի նմին կողիցն զԵւայ յառաջ(65բ)ած: Նոյն ինքն Տէ՛ր ընդ քեզ, եւ դարձեալ ի քէն: Եկա՛յք այսուհետեւ եւ[113] մեք ո՛վ սիրելիք ի հրեշտակային[114] աւրհնութիւնսն հետեւելով, ըստ կարողութեան զպարտն[115] մտերմաբա՛ր հատուսցուք: Ուրա՛խ լեր բերկրեալդ[116], Տէ՛ր ընդ քեզ, զի քո՛ է ճշմարիտ ուրախանալն: Վասն[117] զի ընդ քե՛զ է աստուածային շնորհն. եւ որպէս ինքն գիտէ տաղաւարեա՛ց ընդ աղախնոյդ[118], Տէ՛րն Փառաց: Ընդ Գեղեցկիդ[119], զարմանալին գեղեցկութեամբ քան զորդիս մարդկան: Ընդ Անարատիդ[120], որ սրբէ՛ զընթանուրս: Ընդ քեզ Աստուած, եւ ի քէ՛ն Աստուած, եւ կատարեալ մարդ: Յորում բնակէ ամենայն լրումն աստուածութեա՛ն[121] մարմնապէս: Ուրա՛խ լեր բերկրեալդ[122], Աղբիւր[123] Լուսոյ, որ լուսաւորես զի նա հաւատացեալս: Ուրա՛խ լեր Արեւելք Իմանալի Արեգականն, եւ Ծաղիկ Անթառամելի՛ Կենաց[124]: Ուրա՛խ լեր Բուրաստան լի՛ անուշահոտութեամբ: Ուրա՛խ լեր Մշտնջենաճաւղ[125] Այգի, որ ուրախ առնես զանձինս քոյոց[126]

96 ԱԲ Քանզի ....ասէր] քանզի վասն նորա մարգարէն գուշակէր ասելով:
97 ԱԲ ուրախացուցանեն] ուրախացուցանէ:
98 ԱԲԳ զընթանուր] զընթանուրս:
99 ԱԲ վայելչաբար] վաելչաբար:
100 Ա Մարիամու] Մարիամա, Բ] Մարիամայ:
101 ԱԲ + նա միայն զգաւ:
102 ԱԲ > եղեւ:
103 ԱԲ զաւրութեամբ իւրով] զաւրութեան իւրոյ:
104 ԱԲ փեսայ] փեսա:
105 ԱԲԳ Սրբութեանց] Սրբութեանցն:
106 ԱԲ Հայր] Հայրն:
107 ԱԲ հաստոյ] հաստոյն:
108 ԱԲ > եւ ազատութեան տուող:
109 ԱԲ հոգաբարձու] հոգաբարձուն:
110 ԱԲ պարգեւատու] պարգեւիչն:
111 ԱԲ > եւ բարեաց կարգաւորիչ:
112 ԱԲ զԱդամ] զմարդն
113 Բ > եւ:
114 Բ ի հրեշտակային] ի հրեշտակաին:
115 ԱԲ զպարտն] զպարտսն:
116 ԱԲ բերկրեալդ] բերկրեալ:
117 Ա Վասն] սակս:
118 ԱԲ աղախնոյդ] աղախնոյն:
119 ԱԲ գեղեցկիդ] գեղեցկին:
120 ԱԲ անարատիդ] անարատին նա:
121 ԱԲ աստուածութեան] աստուածութեանն:
122 ԱԲ > բերկրեալդ:
123 Գ աղբիւր] աղբեւր:
124 ԱԲ կենաց] կենացն:
125 ԱԲ մշտնջենաճաղ] մշտնջենաճիղ, Գ] մշտնջենաճեղ:
126 Բ քոյոց] քոռց:

փառաւորչաց: Անմշակելի՛ Անդաստան, եւ Գեղեցկապտուղ Ողկոյզ. ըստ նմանութեա՛ն վասն ըստ մեզ գոլով եւ վասն ժամանակի յղութեանն: Իսկ ի վե՛ր քան զբնութիւնս: Վասն զի ի վերուստ բանին եկաւորութեամբ ի սուրբ արգանդ քո զերկրորդ Ադամն[127] վերաստեղծելով: Ա՛րդ, զծննդականութիւն Սուրբ Կուսին Սուրբ Հոգին[128] շնորհէր, իսկ ճշմարտութիւն մարմնոյն ի մարմնոյն առաւ: Որպէս մարգարիտ յերկուց բնութեանց ի փայլակնէ՛[129] եւ ի ջրոյ անյայտ նշանակաց ծովու[130] յառաջ գայ, այնպէ՛ս[131] եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս անշփութաբար[132],եւ յանեղաբար[133],ի մաքո՛ւր եւ յանարատ Կուսէն յառաջ գայ իւր կատարեալ աստուածութեամբն եւ կատարեալ մարդկութեամբ[134]: Զոր յոլովք ի սրբոցն[135] ցանկացան ականատեսք լինել եւ ո՛չ եղեն, եւ սրբոց հրեշտակաց հանդիպեցան տեսութեան: Բայց միայն առ Սուրբն Մարիամ հրեշտակապետն Գաբրիէ՛լ լուսաւորաբար եկեալ «զուրա՛խ լեր բերկրեալն» աւետարանեաց նմա: Եւ այսպէ՛ս ընկալաւ զբանն, եւ ի ժամանակի մարմնաւորական լրմանն. զբազմագին մարգարիտն[136] յառաջաբերեաց: Ա՛րդ եկայք ո՛վ (66ա) սիրելիք, ի դաւթեան աստուածաշունչ քնարէն զուսուցեալսն[137] մեզ երգաբանեսցուք: «Արի՛ Տէր ի հանգիստ քո, դու եւ տապանակ սրբութեան քո» (Սաղմ. ՃԼԱ/ ՃԼԲ/ 8): Քանզի Տապանակ Ճշմարտութեան Սուրբ Կո՛յսն է: Ներքոյ եւ արտաքոյ ոսկիացեալ, եւ զբոլոր դանձն սրբութեան ընկալեալ: Արի՛ Տէր ի ծոցոյ հաւր, որպէս յարուցեր զանկեալ[138] ազգ նախայստեղծին[139] Ադամայ[140]: Զայսոսիկ մարգարէն ասելով առ այն որ ի նմանէ հանդերձեալ էր շառաւեղել[141] զգաւազան[142] գեղեցկապտո՛ւղ ծաղիկն, որ մարգարէանալով ասէր: «Լո՛ւր դուստր[143] եւ տե՛ս, խոնարհեցո՛յ զունկն քո, մոռա՛յ[144] զժողովուրդ քո, եւ զտուն Հա՛ւր քո, զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քում: Զի նա ինքն է Տէ՛ր քո[145], երկի՛ր պագցես նմա[146]» (Սաղմ. ԽԴ/ԽԵ/ 11-12): Լո՛ւր դուստր[147], զվաղնջուց զմարգարէացեալսն[148] առ քեզ, եւ որպէս գիտութեամբ աչաւք հայեսցի՛ս յիրսն:

Լո՛ւր ինձ նշանակողիս քո, այլեւ հրեշտակապետին. որ զկատարեալ խորհուրդն քեզ պատմէ: Եկա՛յք այսուհետեւ սիրելիք յառաջագոյն ասացելոցն յիշատակ վե՛ր ընթանալով զառ ի Յեսսեա՛յ[149] գաւազանն, զայսպէս առաւել անբնա-

127 Բ Ադամն] անդամ:
128 ԱԲ ~ Հոգին Սուրբ:
129 ԱԲ ի փայլակնէ] ի փայլականէ:
130 ԱԲ > ծովու:
131 ԱԲ այնպէս] այսպէս:
132 ԱԲ անշփութաբար] անշփոթաբար:
133 Բ յանեղաբար] անյեղաբար:
134 ԱԲ մարդկութեամբ] մարդեղութեամբ:
135 ԱԲ ի սրբոցն] ի սրբոց հայրապետացն:
136 Ա մարգարիտն] մարգիտն:
137 ԱԲ զուսուցեալսն] զուսուցեալն:
138 Ա զանկեալ] զանգեալ:
139 ԱԲ նախայստեղծին] նախաստեղծին:
140 Բ Ադամայ] Ադամա:
141 ԱԲ շառաւեղել] շառաւեղիլ:
142 Բ զգաւազան] զգաւազանն:
143 Ա դուստր] դուստ:
144 ԱԲ մոռայ] մոռա:
145 ԱԲ > քո:
146 Ա նմա] նմայ:
147 Ա դուստր] դուստ:
148 Ա զմարգարէացեալսն] մարգարէացեալսն:
149 Ա Յեսսեայ] Յեսսեա, Բ] յԵսսեայ:

բար շառաւեղեալն փառաւորեսցուք: Աւրհնեսցո՛ւք: Բարեհամբաւեսցո՛ւք: Երանեսցո՛ւք: Զի՛ ոչ միայն Յովսեփայ[150], այլ նմի՛ն իսկ վկայելով[151] Աստուածածնին: Ղուկաս պատմէ՛ յաւետարանումն, զի նոյն[152] Դաւթի զհարազատութիւնն: Ե՛լ ասէ եւ Յովսէփ ի Գալիլիէ[153] ի քաղաք մի Հրէաստանի որ կոչի Բեթղեէմ. գրիլ հանդերձ Մարիամաւ[154] խաւսեցեալով նմայ[155] որ էր յղի՛. վասն լինելոյ[156] նորա ի տանէ[157] եւ ի հայրութենէ՛ Դաւթի: Եւ լցա՛ն աւուրք ծնանելոյն[158] նորայ[159]. եւ ծնա՛ւ զՈրդին իւր զանդրանիկն[160] արարածոց[161] եւ խանձարրեաց[162] զնա եւ ընկղմեցոյց[163] ի մսուր[164]: Խանձարրեաց զխմբագործաւղն[165] ամենայն արարածոց: Խանձարրեաց զարկաւղն զլոյս[166] որպէս զաւթոց: Ընկղմեցոյց[167] ի մսուր զնստեալն ի վերայ[168] քերոբէիցն[169]: Յանբանիցն մսուր հանգեաւ Բանն Աստուած, որպէս զի արդարեւ ըստ կամաց անբանիցն մարդկան զգայութիւն[170] փոխարկեսցէ ի սեղան անասնոց նախադրեցաւ երկ(66բ)նային հացն կենդանութեան որպէս զի անասնուտ մարդկան պարգեւեսցէ[171] զաստուածային խորհրդոյն[172] զհաղորդութիւն. եւ ոչ էր նորա[173] տեղի յիջավանի[174]: Տեղի ոչ ունէր, որ զերկինս եւ զերկիր ստեղծ. վասն զի որ մեծատունն էր վասն մեր աղքատացաւ. եւ զծայրագոյն աղքատութիւն առ զիւրեաւ[175] վասն փրկելոյ զբնութիւնս մեր: Զբնաւորեալս առ նորա բարերարութիւնն որ առ մեզ. եւ անճառելի խորհրդով տնաւրէնութեամբ ելից[176] զամենայն արդարութիւնս: Յերկինս եւ ի ծոց Հաւր եւ աստ յայրին եւ ի գիրկս Մաւր: Հանգեաւ ի մսուր եւ հրեշտակային պարք շրջապատէին[177] յերկինս զփառաւորութիւնն[178] եւ ի վերայ երկրի զխաղաղութիւն զեկուցանէին:

Յերկինս ընդ աջմէ Հաւր նստէր եւ ի մսուր որպէս քէրովբէս[179] հանգչէր: Աթոռ արդարեւ այս[180] քէրովբէական: Աթոռ թագաւորական եւ միայն Սրբութիւն Սրբոց յերկրի, յորում[181] եւ նմայ[182] վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ[183] այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

150 ԱԲ Յովսեփայ] Յովսեփա:
151 Բ վկայելով] վկայել:
152 ԱԲԳ զի նոյն] զնոյն:
153 ԱԲԳ Գալիլիէ] Գալիլեէ:
154 Գ Մարիամաւ] Մարեմաւ:
155 ԲԳ նմայ] նմա:
156 ԱԲ > եւ Բեթղեէմ վասն լինելոյ:
157 ԱԲ ի տանէ] ի Տեառնէ, Գ] տանէ:
158 ԲԳ ծնանելոյն] ծնանելոյ:
159 ԱԲԳ նորայ] նորա:
160 Բ զանդրանիկն] զանդրանիկ:
161 ԱԲ արարածոց] ամենայն արարածոց:
162 Բ խանձարրեաց] խանձարարեաց:
163 ԱԲ ընկղմեցոյց] ընկղմնեցոյց:
164 ԱԲ ի մսուր] զնա ի մսուր:
165 ԱԲ զխմբագործաւղն] զխմբագործողն:
166 ԱԲ զլոյս] զլոյսն:
167 ԱԲ Ընկղմեցոյց] Ընկղմնեցոյց:
168 ԱԲ ի վերայ] ի վերա:
169 ԱԲ + եւ ի բիւրուց հրեշտակաց զերգաբանեալն, Բ քերոբէից] քերովբէից:
170 ԱԲ զգայութիւն] զգայութիւնն:
171 ԱԲ + պարգեւեսցէ պարգեւ:
172 Բ խորհրդոյն] խորհրդոյ:
173 ԱԲ նորա] նոցա:
174 Ա իջավանի] իջեվանի, Բ] յիջէվանի:
175 ԱԲ ~ զիւրեաւ առ:
176 ԱԲ ~ ելից տնաւրէնութեամբ:
177 Բ շրջապատէին] շուրջ պատէին:
178 ԱԲ զփառաւորութիւնն] զփառաբանութիւն հնչէին:
179 Ա քէրովբէս] ի քէրովբէս, Բ] ի քրովբէս:
180 Բ > այս:
181 Բ + յորում հանգեաւ Քրիստոս Աստուած մեր:
182 Ա նմայ] նմա, Բ] նա:
183 Ա իշխանութիւն եւ պատիւ] հանդերձ հարբ եւ Հոգւովն սրբով: